ինքն Ապու Տաճատ ըստ ասելոյ ոմանց՝ զկնի 10 աւուրց
սատակի անդ 'ի Յոպպէ։ Եւ 'ի ձեռագիրս ինչ ասի թէ՝
զօրքն Եգիպտացւոց զՅոպպէ և զՌեմլէ աւարեցին՝ զ6 մի-
աբան և զ6 ուխտաւորս արտաքոյ Յոպպէյու գտեալ նա-
հատակեցին։

Պօղոս եպիսկոպոս չհանդուրժեալ վշտաց և դառնու-
թեանց ժամանակին հանգեաւ 'ի Քրիստոս, որպէս գրի
'ի տապանաքարի իւրում, խուն ինչ ցաւօք խիթացեալ
(1775 'ի 18 Մայիսի), և թաղեցաւ 'ի նմին աւուր 'ի վանս
Ս. Փրկչի։

Միաբանք վանաց Ս. Յակոբայ գրեալ ծանուցին 'ի Կոս-
տանդինուպօլիս զմահ Պօղոս Պատրիարքի առ Զաքարիայ
Պատրիարք և առ գլխաւորս ազգին, եւ առ փոխանորդն
Երուսաղէմի Յովակիմ եպիսկոպոս՝ յանձն առնելով 'ի կամս
նոցա զընտրութիւն նորոյ Պատրիարքի։ Եւ 'ի լինել ազ-
գային ժողովոյ ընտրեցաւ Պատրիարք Աթոռոյն նա ինքն
Յովակիմ եպիսկոպոս Քանաքեռցի թեւարկութեամբ Զա-
քարիայ Պատրիարքի Կաղզուանցւոյ 1775, յամսեանն Օ-
գոստոսի, և հաստատեցաւ իշխանութիւն նորա Կայսերա-
կան հրովարտակաւ ١١٨٩։ Յետ այնորիկ Յովակիմ եպիս-
կոպոս կարգեաց անդ 'ի տեղի իւր փոխանորդ Երուսա-
ղէմի զՍարգիս անուն ոմն յանձանձել զամենայն գործս
Աթոռոյն, որ և կատարեաց նա զայն պաշտօն ժրաջան
աշխատութեամբ մինչեւ ցաւուրս Պետրոս Պատրիարքի։
Ապա 'ի կարգի եդեալ զգործս իւր եւ Յովակիմ 'ի կայսե-
րանիստ քաղաքէ անտի և եկն յԵրուսաղէմ, եւ միաբանք
սիրով և ուրախութեամբ ընկալեալ զայն նստուցին յԱթոռ
Պատրիարքութեան 'ի 5 Հոկտեմբերի. ապա գրեցին պա-
տասխանի գրոց ազգային երեւելեաց եւ առ Պատրիարքն
յայտ առնելով 'ի նմին զգոհունակութիւնս իւրեանց, եւ
ըստ պատուիրելոյ նոցին խոստացան հնազանդիլ Յովակի-
մայ իբրեւ գլխոյ իւրեանց, և անտրտունջ աշխատիլ յա-
մենայն գործս 'ի պայծառութիւն Աթոռոյն. յայս գիր
ձեռնարկեալ կնքեցին բոլոր միաբանք (1775. 'ի 24 Նո-
յեմբերի)։

Իսկ և իսկ յառաջին ամի Պատրիարքութեան Յովակի-
մայ յարեաւ վէճ անդարմանելի. քանզի հասին կղերք